ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԸ ԵՎ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ

(Գլաձորի համալսարանի հիմնադրման 700-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գլաձորի համալսարանն անցյալի հայ մշակույթի կարևոր օջախներից մեկն է։ Նրանից առաջ ու հետո միջնադարյան Հայաստանում, ճիշտ է, գործել են բարձրագույն համարումով դպրոցներ՝ Անի, Հռոմկլա, Հավուց Թառ, Տաթև և ուրիշներ, սակայն նրանցից ոչ մեկն իր ուսումնագիտական մակարդակով, հասարակական կյանքում խաղացած օգտաշատ դերով և ստեղծագործական բարձրարվեստ մշակույթով չի կարող համեմատության մեջ դրվել Գլաձորի հետ։ Պատահական չէ, որ ժամանակակիցները համալսարանը հիշում են արտակարգ բարձր կոչումներով՝ «Երկրորդ Աթենք պանծալի», «Մայրաքաղաք իմաստութեան», «Մեծ դպրատուն», «Գերահռչակ համալսարան» և այլն։ Որքան էլ չափազանցված համարենք այդ կոչումները, այնուամենայնիվ, նրանք ցուցանիշ են Գլաձորի համալսարանի երբեմնի վայելած մեծ հեղինակության։

Գլաձորը շուրջ 70 տարիների ընթացքում տվել է զարգացած և հայրենասեր մտավորականների ընտիր մի սերունդ, որը XIII դարի վերջերին և XIV դարի առաջին կեսին՝ հայ ժողովրդի փորձության ծանր տարիներին, կարողացել է ոչ միայն ոչնչացումից փրկել անցյալի հարուստ մշակույթի ստեղծագործությունները և պատվով փոխանցել գալիք սերունդներին, այլև իր ծանրակշիռ ներդրումները կատարել իր ժառանգած մշակույթի վրա։ Գլաձորի համալսարանում է սովորել հայ ականավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանը՝ «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության հեղինակը։ Գլաձորի սաներից է Տաթևի համալսարանի նշանավոր ուսուցչապետ Հովհաննես Որոտնեցին։ Գլաձորում են իրենց ուսումն ստացել մատենագիրներ Մխիթար Սասնեցին, Հոհան Արճիշեցին, Տիրատուր Կիլիկեցին, Կիրակոս Երզնկացին և շատ ուրիշներ։ Գլաձորի հետ են կապված եղել տաղերգուներ Խաչատուր Կեչառեցին և Հովհաննես Երզնկացին։ Ենթադրվում է, որ Գլաձորի սաներից էր հայ միջնադարյան բանաստեղծության պարծանք Ֆրիկը։ Գլաձորում սովորելու են եկել Հայաստանի տարբեր վայրերից՝ Տարոնից, Երզնկայից, Շիրակից, Այրարատից, Թավրիզից, Գուգարքից, հեռավոր Կիլիկիայից և այլ վայրերից։

Մեզ են հասել Գլաձորում գրված և զարդանկարված տասնյակ ձեռագրեր, որոնք ցրված են աշխարհով մեկ և բազմաթիվ գրադարանների, թանգարանների և ձեռագրական հավաքածուների հիասքանչ ցուցազարդերն են հանդիսանում։ Գլաձորի ձեռագրերից կան Մաշտոցի անվան Մատենադարանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների ձեռագրական հավաքածուներում.

Բրիտանական թանգարանում, Նոր Ջուղայի գրադարանում, Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանում և այլ ձեռագրական հավաքածուներում։

Թե ինչ ջանասիրությամբ են Գլաձորի գրիչները ձեռնամուխ եղել ձեռագրերի ընդօրինակմանը, այդ կարելի է պատկերացնել Սարգիս գրչի՝ Գլաձորում 1318 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանից. «Ես՝ Սարգիս, համբակ և սպասավոր բանի, տկար մարմնով և տառապեալ անձամբ, բազում աշխատութեամբ ծրագրեցի զսայ իմովս փծուն և անարհեստ մատամբ գումարեցի զսա իբրև զմեղու, որ զխորիսխն ժողովէ ի վայելուչ բուրաստանաց ի բշիջս մաղու իւրոյ նախ ի պէտս իւր և ապա ի բժշկութիւն հիւանդաց և ի պէտս թագաւորաց և իշխանաց, այնպէս և ես կամեցա զսա ամբարել ի քարտի...»[1]։

Գլաձորի ուսումնականներն ընդօրինակել և մեկնաբանել են անտիկ և վաղ քրիստոնեական աշքի ընկնող տասնյակ հեղինակների աշխատություններ։ Նրանց մեջ կան այնպիսի հեղինակներ, ինչպես, օրինակ, Կյուրեղ Աղեքսանդրացին, Եփրեմ Ասորին, Հոհան Ոսկեբերանը և հույն ու ասորի այլ հեղինակներ, որոնց առանձին աշխատությունների բնագրերը մեզ են հասել միայն գլաձորցիների կատարած ընդօրինակությունների միջոցով։

Գլաձորի ուսումնականները, սակայն, միայն օտար հեղինակների աշխատությունների ընդօրինակություններով կամ նրանց մեկնություններով չէ, որ զբաղվել են. նրանք լծված են եղել ստեղծագործական աշխատանքի, գրել են ինքնատիպ աշխատություններ, որոնք ընդգրկում են գիտության տարբեր բնագավառներ։ Դրանց մեջ կան փիլիսոփայական, քերականական, տոմարագիտական և գիտության այլ ասպարեզներին վերաբերող արժեքավոր աշխատություններ։ Զգալի թիվ են կազմում հատկապես աստվածաբանական երկերը։

Գլաձորցիները շնորհակալ գործ են կատարել հին հայկական բնագրերի հավաքման, նորոգման և ընդօրինակման գործում։ Գլաձորին ենք մենք պարտական Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու պատվերով Լուսեր գրչի 1280 թ. ընդօրինակած Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» սքանչելի աշխատությունը, որը տվյալ հեղինակի մեզ հասած միակ ձեռագիրն է։

Խոշոր է եղել Գլաձորի դերը հայ ժողովրդի հասարակական և քաղաքական կյանքում։ XIII—XIV դդ. մոնղոլական վայրագությունների հետևանքով հայ ժողովուրդը հայրենի երկրում ենթակա էր ֆիզիկական բնաջնջման, իսկ Կիլիկիային վտանգ էր սպառնում մոնղոլական հորդաների և եգիպտական սուլթանության կողմից։ Հայ ժողովրդի համար ստեղծված այս ծանր կացությունը փորձեց օգտագործել Վատիկանը. նա խոստացավ հայերին օգնության ձեռք մեկնել մի պայմանով՝ եթե նրանք համաձայնեն կաթոլիկություն ընդունել։ Կիլիկիայի հայ կաթողիկոսներից և թագավորներից ոմանք հարկադրված պատրաստակամություն հայտնեցին ընդունելու կաթոլիկությունը։ Փորձության այս ծանր շրջանում Գլաձորի հեռատես մտավորականներն էին, որոնք շատ շուտ կռահեցին, որ դավանափոխությունը հայ ժողովրդի համար կարող է ճակատագրական լինել. ավանդական սովորույթներից հրաժարվելը արյունաքամ եղած ժողովրդին կտաներ դեպի ձուլում։ Եվ գլաձորցիներն էին, որ համարձակ պատասխանեցին Վատիկանին թե՝ «Հաւան եմք մեք ընդ մեր

---

1 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մասն Բ, Երուսաղեմ, 1944, էջ 229։

հարսն ի դժոխս իջանել և ոչ ընդ Հռոմոց յերկինս ելանել»[2]։ Ի դեպ, հետագայում Գլաձորում հայրենասիրական հին ավանդույթով դաստիարակված սաներն էին, որոնք հայ հասարակական և քաղաքական ուժերը համախմբելու նպատակով ծրագրեցին և իրագործեցին Ամենայն Հայոց կաթողիկոսական գահի փոխադրումը Էջմիածին։

Վաստակաշատ բանասեր Գ. Հովսեփյանը, որը հանգամանորեն ուսումնասիրել է Գլաձորի համալսարանի գործունեությունը, հետևյալ կարծիքն է հայտնել նրա մասին. «Գլաձորը վանք չէր սովորական մտքով, ինչպես Կեչառույքն էր, Գեղարդը և այլն, ուր նույնպես վարդապետներ կային և որոնք աշակերտներ ունեին, այլ գերազանցորեն դպրոց... XIII դարի վերջին երկու տասնամյակից սկսած մինչև XIV դարի կեսերը հոգևոր քաղաքակրթական բնույթ կրող բոլոր երևույթները մեծ կամ փոքր չափով կապված են Գլաձորի հետ»[3]։

Հայ մշակույթի այս հռչակավոր օջախը գտնվել է Սյունիքի Վայոց Ձոր գավառում, ներկայիս Եղեգնաձորի շրջանում։ Բարձրագույն հաստատության հիմնումը լեռնոտ Դարալագյազում, իհարկե, պատահական չէր։ 1236 թ. մոնղոլների կողմից Հայաստանը նվաճվելուց հետո հայ ժողովրդի համար ստեղծվեց անտանելի ծանր վիճակ. մոնղոլ տիրակալները սկսեցին իրենց անօրինական վայրագությունները անպաշտպան բնակչության նկատմամբ։

Մոնղոլական դաժանություններից համեմատաբար աղատ մնաց Սյունիքը։ Նրա աշքի ընկնող իշխաններից մեկը՝ Սմբատը, դիվանագետ մի անձնավորություն, անձամբ ուղևորվեց Կարակորում, Մանգու խանի մոտ, նրան նվեր տարավ թանկարժեք մի զոհար և կարողացավ խանից ստանալ «ինքնուրույն» իրավունք՝ քաղաքական բնույթի բացառիկ մի առանձնաշնորհ, որով Սյունիքն անմիջական վասալական կախվածության մեջ էր մտնում մեծ խանից և ազատվում մոնղոլ մեծ ու փոքր պաշտոնյաների ու զինվորականների կամայականություններից։ Մոնղոլ տիրակալների սիրալիությունը շահեց նաև Վայոց Ձորի Պռոշ իշխանը, որը մոնղոլների բանակում, իր զորամասով, մասնակցեց Բաղդադի գրավմանը և աշքի ընկավ քաջագործություններով։ Սյունիքի համար ստեղծված այսպիսի շատ ու քիչ բարենպաստ քաղաքական պայմաններում հնարավոր եղավ Վայոց ձորում հիմնել Գլաձորի համալսարանը և գրչության մի շարք օջախներ՝ Բոլորբերդը, Հերմոնը, Եղեգիսը, Վերին Նորավանքը և ուրիշներ։

Գլաձորը, իբրև բարձրագույն ուսումնական հաստատություն, բավականաչափ ուսումնասիրված է։ Հրատարակված է համալսարանին վերաբերող սկզբնաղբյուրների մեծ մասը, լուսաբանված են նրա պատմության հետ կապված բազմաթիվ հարցեր, սակայն լուծման կարոտ են համալսարանի տեղադրության և հիմնադրության տարեթվի հարցերը։ Այս հռչակավոր ուսումնական հաստատության հիմնադրման 700-ամյակի առթիվ հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է որոշակի պատասխան տալ այս հարցերին։

---

2 Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 459։

3 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., մասն Բ, էջ 198—199։

* * *

Գլաձորի տեղը պատմագիտական գրականության մեջ վիճելի է համարվում. գիտնականներից ոմանք այն տեղադրում են Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն գյուղից վերև, Բոլորբերդի ձորում, իսկ մյուսները այն համարում են նույն շրջանի Թանահատի վանքը։

Գլաձորի տեղադրության հարցին առաջին անգամ անդրադարձել է մեծանուն Ղևոնդ Ալիշանը։ Նրա կարծիքով Գլաձորի համալսարանը գտնվել է Բաշքենդի բերդից հարավ, Բյուլբյուլ-Օլան գյուղից հյուսիս, մոտ մի մղոնաչափ հեռավորության վրա, երկու վտակների միջև ընկած ավերակ գյուղատեղում, որը կոչվել է Քյոլասար կամ Քյուլյուպինա[4]։ Գ. Հովսեփյանը ևս հնարավոր է համարել, որ Գլաձորը գտնված լինի «Պաշքյանդ գյուղի հյուսիս-արևելյան կողմը մի ձորագոգի մեջ, Քյուլապինա կոչված գոմանոցից փոքր-ինչ դեպի արևելք...»[5]։ Ալիշանին և Հովսեփյանին, ինչպես երևում է, թյուրիմացության մեջ ձգողը եղել են դպրոցի «Գլաձոր» և «Աղբերց վանք» անունները։ Տեղադրությունը որոշելու համար նրանց մեկնակետն է եղել՝ ընտրել այնպիսի մի վայր, որտեղ անպայման լինեն ձոր և աղբյուրներ, որպեսզի արդարանա «Գայլի ձոր» և «Աղբերց վանք» անունների գործածությունը։ Այդ որոշակի երևում է Հովսեփյանի «Աղբերց վանք» անվանը տված հետևյալ հիմնավորումից. «Գլաձորի թերակղզու հարավային և հյուսիսային կողմերից աղբյուրներ են բխում, ուստի երբեմն Աղբերց վանք ևս կոչվել է»[6]։

Իրականում, Գլաձորի համալսարանը ձորում չի գտնվել, այլ բարձրադիր մի վայրում։ Այդ երևում է Գլաձորի գրիչ Գրիգորի 1335 թ. գրած հիշատակարանից. «Գրեցաւ ...ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոցձոր. բարձրադիտակ մենաստանիս Գլաձոր»[7]։

Ալիշանի և Հովսեփյանի մատնացույց արած վայրը փոքրիկ գոգավորություն է, ուր խղճուկ մի մատուռից ու ոչինչ չասող երկու արձանագրություններից բացի այլ հնություն գոյություն չունի։ Ըստ որում, այդ մատուռն այնքան փոքր է, որ չորս-հինգ հոգի հազիվ կարող է տեղավորել։ Հայտնի է, որ Գլաձորի համալսարանը բավական խոշոր ուսումնական հաստատություն է եղել, այնտեղ հարյուրավոր ուսանողներ են սովորել, դեռ չենք խոսում մեծ թիվ կազմող ուսուցիչների, միաբանների և սպասարկող կազմի մասին։ Այդքան մարդկանց համար, բնական է, պետք է որ լիներ վանք-աղոթարան, դպրոց, մատենադարան և հարակից շենքերի համալիր, իսկ իրականում դրանցից ոչ մեկի հետքն անգամ չկա այնտեղ։

Ի դեպ, Գ. Հովսեփյանն իր նախկին ասածից 45 տարի հետո կրկին անդրադարձել է Գլաձորի տեղադրության հարցին և վերանայել իր կարծիքը. «...այն ավերակները,— գրել է նա,— որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինեին, ընչին են, նյութի հետ կապ չունեցող և ոչինչ չլուսաբանող երկու արձանագրության բեկորներով ...Եկեղեցին շինված է հասարակ քարով. շրջա-

---

4 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 130։

5 Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, Վաղարշապատ, 1899, էջ 9։

6 Նույն տեղում, էջ 10։

7 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1141, էջ 331ա (տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 272)։ Այստեղ և հետագայում կատարված բոլոր ընդգծումները մերն են։

պատում էլ չկան ընդարձակ ավերակներ, ինչպես ենթադրել կարելի էր վանքի մեծ հռչակից»[8]։

Աղդագրագետ Ե. Լալայանը, ուսումնասիրելով Դարալագյազի հնավայրերը և Գլաձորի մասին եղած մատենագրությունը, որոշակի եկել է այն հետևության, որ Թանահատը Գլաձորն է։ Նա Գլաձորի տեղադրության մասին գրել է. «Ս. Խաչ վանքի արևելյան կողմը, մոտ երկու վերստ հեռու, Մալիշկա գետակի երկրորդ վտակի ձախ ափին գտնվում է Ղարավանք (Սև վանք) գյուղը, որ յուր անունը ստացել է մոտի տափարակ բլրակի վրա սև քարերով շինված վանքից։ Այս, թուրքերի կողմից Ղաբա-վանք կոչված մենաստանը ԺԴ դարում շինված Թանահատի վանքն է, ուր ամփոփված է 735 թ. Մոզում նահատակված Ստեփանոս եպիսկոպոսի մարմինը»[9]։

Լալայանի այս կարծիքը պաշտպանել է արվեստաբան Ա. Ավետիսյանը։ Մատնացույց անելով Գլաձորի տեղադրության մասին աշխարհագրական որոշ տեղեկություններ, նա ևս եզրակացրել է. «Այսպիսով, կարելի է ասել, որ այժմ մեզ հայտնի Թանատի վանքը XIII—XIV դարերում, համալսարանի գոյության ժամանակաշրջանում (նաև հետագայում) հայտնի է եղել Գլաձոր կամ Աղբերց վանք անունով»[10]։

Հայտնի է, որ միջին դարերում բոլոր դպրոցները, լինեն նրանք տարրական, միջնակարգ թե բարձրագույն, հիմնված են եղել և գործել են վանքերին և կամ այլ կրոնական հաստատություններին կից։ Այդպես է եղել միջնադարում աշխարհի բոլոր ժողովուրդների մոտ, այդպես է եղել նաև հայ իրականության մեջ։ Գլաձորը, իհարկե, բացառություն չի կազմել։ Արդարության դեմ մեղանչում են այն ուսումնասիրողները, որոնք փորձում են Գլաձորը դիտել իբրև անկախ, վանական ենթակայությունից դուրս գտնվող հաստատություն։

Արդ, եթե Գլաձորը ինքնուրույն ուսումնական հաստատություն չի եղել, այդ դեպքում անհրաժեշտ է պարզել, թե ո՞ր վանքի կամ մենաստանի հովանավորության տակ է գտնվել։ Բարեբախտաբար, Գլաձորի համալսարանում գրված և մեզ հասած ձեռագրերի մեծ մասում որոշակի նշվում է, որ Գլաձորի համալսարանը գտնվել է Թանահատի կամ Թանատի Ս. Ստեփանոս վանքի հովանավորության ներքո։ Բերենք Գլաձորի մի քանի գրիչների վկայությունները։ Մկրտիչ գրիչը 1298 թ. Գլաձորում գրած ձեռագրի հիշատակարանում հայտնում է. «[Յիշեսջիք] եւ զեղկելիս, Զվերագծող այսմ տառիս, Ի մենաստանս Գլաձորիս, Ընդ հովհանեաւ սուրբ Ստեփանոսիս, Ձեռամբ անարժան Մկրտչիս...»[11]։ Պողոս գրիչը 1313 թ. Գլաձորում ավետարան է ընդօրինակել և իր թողած հիշատակարանում գրում է. «Արդ ես՝ տկարս... Պաւղոս վարդապետ, ծրեցի իմով տկարութեամբ սուրբ աւետարանս յոլով աշխատանաւք և քրտնաջան տառապանաւք, ի գաւառիս, որ Վայոձոր ասի, և ի մեծ մենաստանիս, որ Գլաձոր յորջորջի, ի դրան սուրբ Ստեփանոս նախավկայիս»[12]։ 1321 թ. Գլաձորում գրված մի ձեռագրի (որն այժմ Բրիտանական թանգարա-

---

8 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., մասն Բ, էջ 189—190։

9 Ե. Լալայան, Շարուր-Դարալագյազի գավառ («Աղդագրական հանդես», գիրք XII, էջ 267)։

10 Ա. Ն. Ավետիսյան, Գլաձորի համալսարանի տեղադրության մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 1, էջ 159)։

11 Մուշեղի անվ. Մատենադարան, ձեռ. № 1409, էջ 261բ։

12 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 92։

նի սեփականություն է) հիշատակարանում ասվում է, որ այն գրված է «...ի հռչակաւոր և սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի»[13]: Վերոբերյալ հիշատակարանները, կարծում ենք, ոչ մի կասկած չեն թողնում, որ Գլաձորի համալսարանը ենթարկվել է Ս. Ստեփանոսի վանքին։

Վայոց ձորում միակ վանքը, որն ունեցել է Ս. Ստեփանոս Նախավկայի անունը, Թանահատի վանքն է։ Ճիշտ է, Վայոց ձորի Այնազուր գյուղի մոտ, Վերին Ույգուր ավերակ գյուղում ևս գտնվել է Ստեփանոսի անունով մի սրբավայր, սակայն դա եղել է ոչ թե վանք, այլ եկեղեցի և գտնվել է ոչ թե Պռոշյան իշխանների տիրույթում, այլ՝ Օրբելյանների։ Ստեփանոս անունով մի այլ հուշարձան ևս գտնվում է Ազիզբեկովի շրջանի Աղաղեկ գյուղում, սակայն սա ևս եկեղեցի է և կառուցված է ուշ շրջանում՝ XVII դարի երկրորդ կեսում։

Այսպիսով, գրիչների վկայություններից հետևում է, որ Գլաձորի համալսարանը գտնվել է Թանահատի Ս. Ստեփանոս վանքի հովանավորության տակ։ Թանահատը կամ Թանատը Հայաստանի վաղ քրիստոնեական հնագույն հուշարձաններից մեկն է։ Ղ. Ալիշանը, հիմնվելով Ստեփանոս Օրբելյանի հաղորդած մի տեղեկության վրա, գտնում է, որ այդ հուշարձանը սյունեցիները կառուցել են II դարում, քրիստոնեությունը Հայաստանում պաշտոնական կրոն ճանաչվելուց առաջ։ Վաղ քրիստոնեական շրջանում այն վանք-մենաստան էր, ուր հաստատված է եղել խստակրոն միաբանություն, որը Ալիշանի ասելով, «...կերակրի համար ոչ միայն մսեղենէ և կթեղենէ հրաժարելով՝ այլև ամենայն տաք բանէ, և թանիկն անգամ թողլով. անոր համար կոչուեցան Թանահատք և տեղն՝ Թանահատի վանք»[14]։

Հայաստանում Թանահատ կամ Թանատ անունով երկու հուշարձան է գոյություն ունեցել, մեկը Վայոց ձորում, իսկ մյուսը՝ Սյունիքի Ծղուկ գավառում։ Անցյալում պատմագիտական գրականության մեջ այս երկու Թանահատները շփոթել են իրար հետ։ Վերջերս միայն հայտնի դարձան Ծղուկի Թանահատի ավերակները[15]։ Ալիշանն այս երկու հուշարձանների անունները տարբերակում է. առաջինն անվանում է Թանահատի վանք, իսկ երկրորդը՝ Թանատի։ Նա հնարավոր է համարում, որ այս երկու վանքերն էլ հեթանոսական մեհյաններ եղած լինեն՝ նվիրված Անահիտ դիցուհուն։

Ըստ Ստեփանոս Օրբելյանի տեղեկության, 735 թ. Թանահատի վանքից ոչ հեռու, Մոզ ավանում սպանվում է հայ մատենագրության ականավոր գործիչ Ստեփանոս իմաստասեր Սյունեցին։ Նրան թաղում են Թանահատին մոտիկ Արկաղան գյուղում, իսկ ավելի ուշ՝ 1274—1279 թթ., երբ կառուցում են Ս. Ստեփանոսի գմբեթահարկ հոյակապ տաճարը, Ստեփանոս Սյունեցու աճյունը տեղափոխում և վերաթաղում են այնտեղ։ Սյունյաց պատմիչն այդ մասին հաղորդում է. «... յ1728 թուականին (1279) շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբէթայարկ գեղեցիկ յօրինուածովք. և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա...»[16]։

---

13 Նույն տեղում, էջ 261։

14 Ղ. Ալիշան, Ստեփանոս Սյունեցի և Սահականդուխտ, «Ցուշիկք հայրենեաց», Վենետիկ, 1869, էջ 287—288։

15 Ս. Բարխուդարյան, Հինգերորդ դարի երկու հուշարձան Սյունիքում («Տեղեկագիր Պատմության և գրականության ինստիտուտի», 1936, № 1),

16 Ստեփանոս Օրբելյան, էջ 143։

Թանահատի վանքին կից կա «Սուրբ նշան» անունով կիսավեր մի մատուռ։ Թանահատի մի քանի արձանագրությունների մեջ նվիրատուները Սուրբ Ստեփանոսի հետ հիշում են նաև «Սուրբ նշանը»։ Գլաձորում գրված ձեռագրերում նույնպես Սուրբ Ստեփանոսի վանքի հետ միասին հիշվում է նաև «Սուրբ նշանը», որն անհերքելիորեն ապացուցում է Գլաձորի՝ Թանահատի հովանավորության տակ գտնվելը։

Բերենք այդ տեղեկությունները զուգահեռ ձևով.

Գլաձորում գրված ձեռագրերի հիշատակարաններում	Թանահատի վանքի արձանագրություններում
«Եւ եղև կատարումն այս տառիս ի թուականութեանս էՃԿէ (1318) ...ի հրեշտակարնակ մենաստանս, որ կոչի Գլաձոր... ընդ հովհանեաւ սուրբ Ստեփանոսի և կենսակիր աստուածաբարձ Ս. Նշանիս»։ (Նոր Ջուղայի ձեռ. ցուցակ, հ. II, էջ 177)։	«Կամաւն Աստուծոյ ես Ասլան Ափայ» եւ իմ որդիքս միաբանեացաք սուրբ Սաեփանոսիս եւ սուրբ Նշանիս եւ տուաք ճ (100) դեկան»։ (Բարխուդարյան, էջ 79)։
«Գրեցաւ մատեանս այս ի թվիս ՉԼ (1321) ի գաւառիս Վայոձոր ի մենաստանս Գլաձոր ընդ հովհանեաւ սրբոյ Սաեփանոսիս և այլ աստուածընկալ սուրբ Նշանիս»։ (Երուսաղեմ, հ. V, էջ 71—73)։	«Կամաւն Աստուծոյ ես Սիմիանս տվի զմեր հայրենի իգին... սուրբ Սաեփանոսի[u] եւ սուրբ Նշանիս...»։ (Բարխուդարյան, էջ 76)։

Մտածել, թե Վայոց ձորում գոյություն է ունեցել Սուրբ Ստեփանոս անունով երկու վանք և նրանց յուրաքանչյուրին կից երկու Սուրբ Նշան անունով մատուռ, կլինի անհեթեթություն։

Պատմական գրականության մեջ տարակուսանքի տեղիք է տվել այն փաստը, թե ինչո՞ւ Ստեփանոս Օրբելյանի մոտ բացակայում են «Գլաձոր» և «Աղբերց վանք» անունները. Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության 64-րդ գլխում թվարկում է Սյունիքի կարևոր վանքերն ու ուխտատեղիները և նրանց մեջ այդ անունները չկան։ Ալիշանն այդ բացթողումը փորձել է բացատրել նրանով, որ համալսարանը «թերևս նոր էր հաստատել»։ Ղ. Ինճիճյանն այդ բացթողմանը երկու հնարավոր լուծում է առաջարկել. կամ Գլաձորը Օրբելյանի օգտագործած խորաձորն է և կամ Օրբելյանը չի ցանկացել ծանրաբեռնել վանքի անունները և բաց է թողել։ Լ. Խաչերյանը կարծում է, որ այդ անունները նախապես գրված են եղել, բայց Օրբելյանի բնագիրն ալտագրող գրիչների ուշադրությունից վրիպել և դուրս են ընկել։ Մենք գտնում ենք, որ այդ անունները Օրբելյանի մոտ չեն եղել և չպիտի լինեին։ Օրբելյանի խնդիրն է եղել ներկայացնել ոչ թե Սյունիքում գտնված մշակութային կենտրոնները, այլ միայն վանքերը և ուխտատեղիները, այդ նկատառումով էլ նա իր աշխատության այդ գլուխը վերնագրել է «Վանորայք ու ուխտք եկեղեցեաց՝ թէ քանի՛ էին յայսմ աշխարհի»։ Գլաձորը ուսումնական հաստատություն էր վանքի հովանավորության տակ, իսկ վանքը Թանահատն է և հիշված է Ս. Օրբելյանի մոտ. «Թանատէի վանք, յորում կայ նշխարք սրբոյն Ստեփաննոսի»[17]։

17 Ստեփանոս Օրբելյան, էջ 340։

Ուսումնասիրողներից ոմանց կասկածի տեղիք է տվել նաև այն փաստը, թե ինչո՞ւ Թանահատի տաճարի վրա եղած տասնյակ վիմագիր արձանագրություններից ոչ մեկի մեջ չի նշվում Գլաձոր անունը։ Այդ տարակուսանքը դյուրին է փարատել, եթե նկատի ունենանք, որ Գլաձորը, ինչպես ասել ենք, մենաստանի ոչ թե անունն է, այլ՝ մականունը։ Այդ որոշակի երևում է Գլաձորի գրիչների հիշատակարաններից։ Հովհաննես Կրոնավորը 1291 թ. ընդօրինակած «Մեկնութիւն կաթողիկէ» աշխատության հիշատակարանում նշել է. «Գրեցաւ... ի մենաստանիս որ կոչի Աղբերց վանս և մականուն Գլաձոր, ընդ հովհանեաւ սրբոյն Ստեփանոսի»[13]։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 7842 ձեռագրի Պողոս գրիչը 1313 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրել է. «...Մրեցի իմով տկարութեամբ զսուրբ աւետարանս յոլով աշխատանաւք և քրտնաջան տառապանաւք, ի գաւառիս, որ Վայոձոր ասի, և ի մեծ մենաստանիս, որ Գլաձոր յորջորջի, ի դրան սուրբ Նախավկայիս»[14]։ Գրիգոր գրիչը 1335 թ. իր ձեռագրի հիշատակարանում նշել է, որ ինքը ձեռագիրն ընդօրինակել է «Ի նահանգիս Սիւնեաց, ի գաւառիս Վայոձոր, բարձրադիտակ մենաստանիս Գլաձոր, որ յանհմուտ և գնչու արանց Գայլաձոր ասի»[20]։ Ըստ այսմ, Գլաձոր անունը վանքի բուն անունը չէ, այն գործ են ածում անծանոթ և գնչու մարդիկ։ Կարծում ենք հարկ չկա ապացուցելու, թե ինչո՞ւ վանքի արձանագրությունները գրող միաբանները սրբավայրի արձանագրություններում Սուրբ Ստեփանոսի անունը չէին կարող փոխարինել «գնչու մարդկանց» կողմից գործածվող Գայլի ձոր անունով։ Բացի այդ, նվիրատուները ևս այդ չէին ուզենա, որովհետև նվերները նրանք տվել են վանքին։



Մի էջ Հովհաննես գրչի 1291 թ. ձեռագրից (Վենետիկ)։

Գլաձորի տեղադրությունը պարզելու նպատակով Երևանի պետական համալսարանի հնագիտության, աղբյուրագիտության և ազգագրության ամբիոնը 1970—1971 թթ. Թանահատում պեղումներ ձեռնարկեց։ Պեղումների ընթացքում հայտնաբերվեցին ընդարձակ շենքեր, ուսուցիչների և ուսանողների տապանաքարեր և դպրոցի հետ առնչվող այլ ցուցանյութեր, որոնք եկան հաստատելու մատենագրական տեղեկությունների հավաստիությունը։ Պարզվեց, որ Գլաձորի դպրոցը, իրոք, գտնվել է Թանահատում և գործել է նրա հովանավորության ներքո։ Գիտական արշավի ղեկավար Ի. Ղարիբյանը իր հրատարակած հաղորդման մեջ Գլաձորի տեղադրության վերաբերյալ

18 «Էջմիածին», 1956, № 4—5, էջ 86։

19 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 92։

20 Նույն տեղում, էջ 272։

նկել է հետևյալ եզրակացության. «Այս բոլորը (խոսքը հայտնաբերված արձանագրությունների, ցուցանյութերի և համալիրների մասին է—Ա. Ա.) մեզ իրավունք է տալիս ասելու, որ գտնվել են Գլաձորի համալսարանի ավերակները, և որ համալսարանի շենքը մտել է Թանահատի եկեղեցական համալիրի մեջ»[21]։

Պեղումներից հետո, երբ վերջնականապես պարզվեց, թե որտեղ է գտնվել Գլաձորի համալսարանը և որ վանքին կից է գործել, Լ. Խաչերյանը հանդես եկավ առարկությամբ, թե համալսարանը գտնվել է ոչ թե Ս. Ստեփանոս վանքի հովանավորության տակ, այլ «Աղբերց վանքի»։ «Հայագիտական գրականության մեջ,— գրել է նա,— թյուր կարծիք է հայտնված այն մասին, թե իբր Աղբերց վանքը, իր հերթին, հենց նույն Թանահատի կամ Թանատի վանքն է... Թանահատի վանքն ու Աղբերց վանքը (հետագայում՝ Գլաձորը) զուգահեռ կերպով հարատևել են՝ մատենագրության մեջ թողնելով գոյատևման արձանագրությունները»։ Նրա կարծիքով, Թանահատն սկզբնաղբյուրներում հիշվում է «իբրև կրոնական միաբանություն, հոգևոր կենտրոն», իսկ Աղբերց վանքը, հետագայի Գլաձորը՝ «բացառապես իբրև ուսումնագիտական կենտրոն»[22]։ Խաչերյանի այս տեսակետը քննադատվեց պատմական գիտությունների թեկնածու Փ. Անթաբյանի[23] և բանասիրական գիտությունների թեկնածու Էմ. Պիվազյանի[24] կողմից։ Ցույց տալու համար, որ նա սխալվում է, ավելորդ չենք համարում բերել Հովհաննես գրչի 1291 թ. Գլաձորում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանից մի հատված, որը վերաբերում է գրչության վայրին. «Ի թվիս ՉԽ (1291) գրեցաւ մեկնութիւնս կաթողիկէիս ձեռամբ բազմամեղ և սուտանուն կրանաւորի Յոհանիսի աշակերտ բանի, ի մենաստանս որ կոչի Աղբերց վանս, և մականուն Գլաձոր քնդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի»[25]։

Հիշատակագիրը, կարծում ենք, փակում է կասկածանքի բոլոր ճանապարհները. ձեռագիրը գրվել է Աղբերց վանքում, որի մականունը Գլաձոր է, իսկ վանքի իսկական անունը՝ Ս. Ստեփանոս։ Հարկ կա՞ ապացուցելու, թե Աղբերց վանք ասելով նկատի են ունեցել Ս. Ստեփանոսի վանքը, որի հովանավորության տակ գրվել է ձեռագիրը։ Ըստ եկեղեցական կանոնների «Աղբերց» (աղբյուրների) անունը սրբավայրի վրա դրվել չէր կարող. այդ անունը ժողովրդի սովորական ստեղծագործություն է, հավանաբար նկատի է առնվել աղբյուրների մոտ գտնվելը։ Անհավանական չէ նաև, որ «Աղբերց» ասելով գրիչները նկատի ունեցած լինեն վանականների եղբայրությունը՝ «եղբարց» իմաստով։ Բոլոր դեպքերում, վանքի ճիշտ անունը եղել է «Սուրբ Ստեփանոս»։

Ի՞նչ նշանակությամբ է գործածվել «Գայլի ձոր» անունը՝ վանքի՞, թե՞ վայրի։ Խաչերյանի կարծիքով այն գործ է ածվել վանքի համար. սկզբում Գլաձոր է կոչվել Տարոնի Առաքելոց վանքը, հետագայում այնտեղի ուսում-

---

21 Ի. Ղարիբյան, Գլաձորի համալսարանի հնագիտական պեղումները («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 260)։

22 Լ. Խաչերյան, Գլաձորի համալսարանը, Երևան, 1973, էջ 15։

23 Փ. Անթաբյան, Արդյոք հայ առաջին համալսարանը Գլաձորն է («Բանբեր Երևանի համալսարանի», 1974, № 2, էջ 203—204)։

24 Էմ. Պիվազյան, Դարձյալ Գլաձորի դպրոցի համալսարանական բնույթը («Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 3, էջ 167—168)։

25 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131։

նականները Տարոնից գալով Վայոց ձոր, այդ անունը բերել դրել են Աղբերց վանքի վրա։ Այդ մասին նա գրել է. «Աղբերց վանքի Դլաձոր վերանվանումը իմաստավորված է Մշո Առաքելոց վանքի երկրորդաբար «Գլաձոր» կիրառվող անվան փոխառությամբ. նրա հիմնադիրները լինելով մշեցիներ կամ սասունցիներ, որոնք իրենց նախնական կրթությունը ստացել են Առաքելոց վանքում, ի փառավորումն նրան, Աղբերց վանքը վերակոչում են Գլաձոր»[26]։

Որ Գլաձոր անունը տեղում գործածվող վայրի կամ հանգի անուն է, այդ անվիճելի երևում է Մխիթար Երզնկացու 1314 թ. Գլաձորում գրած ձեռագրի հիշատակարանում գրչության վայրի մասին հայտնած տեղեկությունից. «Բայց գրեցաւ գիրքս այս առ ոտս մեծ վարդապետիս Եսայեայ, ի տեղիս, որ կոչի Գլաձոր, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսիս»[27]։

«Գլաձորը» այստեղ գործ է ածված ոչ թե իբրև վանքի անուն, այլ այն վայրի, ուր գտնվել է վանքը՝ «Ի տեղիս, որ կոչի Գլաձոր»։ Այս իմաստով է Գլաձոր անունը գործածված բոլոր հիշատակարաններում. «Գլաձորի վանք» ասելով նկատի ունեն տվյալ վայրում գտնված վանքը, «Գլաձորի վարժարան» ասելով՝ Գլաձոր վայրի դպրոցը և այլն։

Հնագիտական պեղումների ժամանակ բացվել է նաև բազիլիկ մի հին մոզայիկ եկեղեցի։ Ի. Ղարիբյանը այս հուշարձանի մասին իր հաշվետվության մեջ հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Թանահատի գլխավոր եկեղեցու հարավային կողմում բացվեց տարբեր ժամանակներում կառուցված բազմապիսի շենքերի մի ամբողջական համալիր, ընդ որում՝ բազիլիկ ոճի ճարտարապետական մի եկեղեցի, կից հինգ առանձին աշխատասենյակիցներով... բազիլիկ եկեղեցին հնագույն կառույց է այստեղ, որը նախնական ձևով բաղկացած է եղել քառանկյունի երկարուկ սրահից՝ կառուցված ստիլոբատի վրա։ Նա հարավային ու հյուսիսային կողմերում ունի մեկական ավանդատուն։ Թե՛ սրահը և թե՛ ավանդատները ունեն իրենց բեմերը և վեմքարերը, որոնք տեղում պահպանվել են»[28]։ Ղարիբյանի կարծիքով բազիլիկ այդ եկեղեցին կառուցված պիտի լինի V—VII դդ.։ «Հայտնի է,— գրում է նա,— որ Հայաստանում բազիլիկ եկեղեցիները կգմինդրե ծածկելով կառուցվել են V—VII դդ.։ Ուստի այս բազիլիկ եկեղեցին պետք է թվագրել այդ դարերով... Պեղումների շնորհիվ պարզվեց նաև, որ սույն եկեղեցին ավարտվել է XI—XII դդ., իսկ 1215 թ. վերակառուցվել»[29]։ Ղարիբյանը գտնում է, որ Գլաձորում կողք-կողքի գոյություն են ունեցել երեք վանք. «Պեղումների հետևանքով պարզվեց,— գրել է նա,— որ Թանահատի համալիրի մեջ առնվազն երեք հուշարձան է մտել, և յուրաքանչյուրն ունեցել է իր ուրույն անունը։ Դրանցից երկուսը արձանագրություններում հիշված են (Ս. Ստեփանոս և Ս. Նշան), իսկ երրորդը՝ ոչ»[30]։ Հավանաբար երրորդը եղած լինի Ս. Կարապետի բազիլիկ եկեղեցին։

Մաշտոցի անվան Մատենադարանի № 206 ձեռագրի ծաղկող Թորոսը 439բ էջում նկարել է համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցուն և նրանից վերև՝ կողք-կողքի երեք վանքերի գմբեթներ։ Ա. Ավետիսյանը նկարի կապակցությամբ այն կարծիքն է հայտնել, որ այդ գմբեթները ցուցանշում են

26 Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 49։
27 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 103։
28 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 253։
29 Նույն տեղում։
30 Նույն տեղում, էջ 257։

տեղում գոյություն ունեցած երեք վանքերը։ «Եսայի Նշեցու Աստվածաշնչի մեջ,— գրել է նա,— հատուկ հետաքրքրություն են ներկայացնում 439բ և 440ա էջերի խորանները (նկ. 26, 27)։ Առաջինում, վերին ձախ անկյունում, նստած դիրքով պատկերված է ձեռագրի պատվիրատու Եսայի Նշեցին, որի գլխավերևում կարդում ենք. «Եսայի վրդ» («Եսայի վարդապետ»)։ Մակագրության վերևում երեք գմբեթ կա, որ արտահայտում է Թանահատ-Գլաձորի վանքում երեք եկեղեցու գոյության միտքը»[31]։ Եթե Ավետիսյանի այդ կարծիքը ընդունելի համարվի, այդ դեպքում նկարված գմբեթներից մեջտեղինը, որն ամենից մեծն է, պիտի համարել Թանահատի վանքը, աջ կողմում ընտրվածը՝ Ս. Նշանի մատուռը, իսկ ձախում՝ խոնարհված Ս. Կարապետի վանքը։

Այս երեք հուշարձաններից բացի տեղեկություններ կան Ներսես Մշեցու դամբարանի մասին։ Հակոբ Թագորցի գրիչը Թանահատում հիշում է նաև Ներսես Մշեցու դամբարանը։ Այդ մասին Ղ. Ալիշանը գրում է. «Նոյն գրիչ (այսինքն՝ Հակոբ Թագորցին—Ա. Ա.) իբրև սրբազան իմն յիշէ և «զԴամբարան սրբոյն վարդապետին Ներսէսի»[32]։ Ի՞նչպես հասկանալ այս տեղեկությունը. Թանահատում Ներսես Մշեցու համար առանձին դամբարա՞ն է կառուցված եղել, թե՞ նրան թաղել են Ս. Նշանում, և գրչի խոսքը Ս. Նշանի մասին է։ Ղարիբյանը հավանական է համարում երկրորդը։ Այդ մասին նա գրել է. «Մենք գտնում ենք, որ Ներսեսը թաղված է Թանահատի համալիրում, մասնավորապես Ս. Նշան մատուռում, որը մեր ենթադրությամբ կառուցվել է հենց այդ նպատակով»[33]։ Այդ մատուռում, իրոք, կա մի գերեզման։ Այն մասին, որ Ներսես Մշեցին մահացել է Գլաձորում և թաղվել այնտեղ, կասկած լինել չի կարող. այդ վկայող մի քանի հիշատակություններ կան։ «Շարադրութիւն վարդապետաց ի Գօշայ հետէ ոտիւ չափեալ» չափածո հիշատակարանում, ուր թվարկված են 35 հեղինակներ, Ներսես Մշեցուն նվիրված քառատողի մեջ նշվում է.

Բաբուն Ներսէս Տարօն Մշաց,
Գիտէր ղլեղու և զժամ յունաց,
Ի փետրվարի վեցն գրաց
Ի Գլաձոր նայ կայ թաղած[34]։

Պեղումների ժամանակ բազիլիկ եկեղեցու հյուսիս-արևելյան խորանի բեմի առջևում բացվել է մի տապանաքար առանց մակագրության։ Ղարիբյանը հնարավոր է համարում, որ այդ լինի Եսայի Նշեցու գերեզմանը, որը մահացել է 1338 թվականին[35]։

Եվ այսպես, վանքի տեղադրության հարցի քննությունը մեզ բերում է հետևյալ եզրակացության.

1. Թանահատի կամ Ս. Ստեփանոսի վանքը, որի հովանավորության տակ գտնվել է Գլաձորի համալսարանը, հեթանոսական շրջանում եղել է մեհյան, իսկ վաղ քրիստոնեական ժամանակներում վեր է ածվել խստակրոն հոգևորականների մենաստանի։

---

31 Ա. Ավետիսյան, Մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 97։

32 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 135։

33 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 258։

34 Ա. Սուրմելյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի, Վենետիկ, 1948, էջ 178։

35 Ի. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 258։

2. Ներկայումս կանգուն Ս. Ստեփանոսի տաճարը կառուցվել է 1275—1279 թթ.։ Նորակառույց այդ տաճարում է վերաթաղվել Ստեփանոս Իմաստասեր Սյունեցին։ Տաճարը կրել է Ստեփանոս Նախավկայի անունը։ Տաճարը ժողովրդի լայն շրջաններում անվանվել է Գլաձորի (Գայլի ձորի) և կամ Աղբերց վանք։ Գլաձորի համալսարանում գրված հնագույն ձեռագրերում գործածվել են Թանահատ և Աղբերց վանք անունները, իսկ հետո՝ Գլաձոր։

3. Գլաձորում կատարված պեղումները վերջնականապես ճշտել են Գլաձորի համալսարանի տեղը և նրա համալիր կառույցները։

* * *

Ե՞րբ է հիմնադրվել Գլաձորի համալսարանը։ Պատմական սկզբնաղբյուրներում այդ մասին տեղեկություններ չկան։ Իրավացի է Ղ. Ալիշանը, երբ դժգոհում է սկզբնաղբյուրների ժլատության համար։ «Ոչ ժամանակ շինութեան վանացս է յայտ և ոչ առաջին և ոչ վերջին դէպք. այլ այն՝ զի յետ կիսոյ ԺԳ դարու ցկէս ԺԴ-ին հռչակեալ էր...»[36]։ Նույն դժգոհությունը հայտնել է նաև բանասեր Գ. Հովսեփյանը. «Պռոշյանց տոհմի պարծանքը՝ հոգևոր-քաղաքակրթական կյանքի զարգացման նկատմամբ՝ Գլաձորի դպրոցն է,— գրել է նա.— այս վանքի պատմությունը տարօրինակ սկիզբ և վախճան ունի. անհայտությունից հանկարծ երևան է գալիս ԺԳ դարի ութսունական թվականի սկզբում իբրև Արևելյան Հայաստանի մտավոր կենտրոնը, և հանկարծ չքանում անհայտության մեջ ԺԴ դարի կեսին»[37]։

Գլաձորի համալսարանի հիմնադրության տարեթվի պարզաբանման հարցով առաջին անգամ զբաղվել է Գ. Հովսեփյանը։ Նա հարցի լուծման համար ելակետ է ընդունել Ներսես Մշեցու Գլաձոր տեղափոխվելու և ուսուցչապետության պաշտոնը ստանձնելու փաստը, որը, ըստ Հովսեփյանի հաշվումների, տեղի է ունեցել 1280 թ.։ Գլաձորը, գրել է նա, առաջին անգամ հիշվում է 1280 թ., «երբ Ներսես Մշեցին հաստատեց այնտեղ յուր վարժապետական աթոռը»[38]։ Տվյալ տարեթվի համար նա կարևոր փաստարկ է համարել Գլաձորի մատենագրական երախայրիքը՝ Լուսեր գրչի նշանավոր ձեռագիրը. «Գլաձորի գոյության ամենահին տեղեկությունը ստանում ենք մի շատ թանկարժեք ձեռագրից, որ գրված է այնտեղ 1280 թ. ձեռագրի ստացողն է «մեծ հռետոր Ներսէս», հիշված է նաև «Նուաստ ոգիս Եսայի հետեւող եւ աշակերտ սուրբ առնն Աստուծոյ Ներսէս վարդապետի»[39]։

Գլաձորի դպրոցի 1280 թ. հիմնված լինելն ապացուցելու նպատակով Հովսեփյանը մատնացույց է արել նաև Մաշտոցի անվան Մատենադարանի մի ձեռագիրը, որը գրված է «Յամի Զ.երորդի, Ի.երորդի, Թ.երորդի թուականիս Հայոց (1280 թ.)[40], որը Հովսեփյանը համարել է «Գլաձորի փառքն ու պատիվը բարձրացնող մի unicum համաշխարհային նշանակությամբ»[41]։

Գլաձորի համալսարանի հիմնադրության հարցին միջանկյալ ձևով անդրադարձել է նաև Լ. Խաչիկյանը իր «Գլաձորի համալսարանը և նրա սաների

---

36 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 131։
37 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., Բ, էջ 189։
38 Նույն տեղում, էջ 191։
39 Նույն տեղում, էջ 202։
40 Նույն տեղում, էջ 203։
41 Այդ ձեռագրի մասին տե՛ս «Արարատ» ամսագիր, 1917, II—III, էջ 193—198։

ավարտական ատենախոսությունները» հոդվածում։ Սա գրում է. «Գլաձորի համալսարանի հիմնադրությունը պետք է կապել Ներսես Մշեցու անվան և գործունեության հետ, որն ընկնում է 1262—1284 թվականների միջև»[42]։ Քանի որ Խաչիկյանը մի այլ կապակցությամբ Ներսեսի Գլաձորի ուսուցչապետությունը սկսելու տարեթիվ է ընդունել 1279—1280 թթ., հետևապես նրա տեսակետը համընկնում է Հովսեփյանի կարծիքի հետ։



Լուսեր գրչի 1280 թ. հիշատակարանը։

Լ. Խաչերյանը ևս Գլաձորի հիմնադրության թվականն է ընդունում 1280-ը։ Հիմք ընդունելով Ներսեսի վարքագրությունը, նա գտնում է, որ Եսայի Նչեցին Ներսես Մշեցու Առաքելոցից հեռանալուց և «...մի տարի Քաջբերունյաց գավառում թափառելուց հետո, մեկնում է Աղբերց վանք-Գլաձոր, իսկ մի այլ ձեռագրից էլ ստուգապես գիտենք, որ Եսայի Նչեցին 1280 թվականին Ներսես Մշեցու հետ միասին գտնվելիս է եղել Աղբերց վանք-Գլաձորում, և այնտեղ նույնիսկ գրչագիր աշխատություն է ընդօրինակել»[43]։

Հայ մատենագրության մեջ հայտնի է, սակայն, պատմական մի սկզբնաղբյուր, ուր Գլաձորը որպես ճանաչված ուսումնական հաստատություն հիշվում է 1280 թ. առաջ։ Այդ «Աշխարհացույց»-ի մի բնագիր է, որը վերագրվում է Վարդան Արևելցուն։ Գլաձորն այնտեղ հիշվում է հետևյալ պարբերության մեջ. «Վայոյ ձոր՝ Եղեգեց ձորն է, ուր կայ կենսաբեր սուրբ նշան, և Գայլոյ ձոր, որ աթոռն է և վարժարան սուրբ վարդապետաց մերոց»[44]։ Այստեղ հիշված Ս. Նշանը՝ Ս. Ստեփանոսին կից կառուցված մեղ

---

42 Լ. Խաչիկյան, Գլաձորի համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները («Պետհամալսարանի գիտաշխատությունների ժողովածու», 1946, հ. 23, էջ 426)։

43 Լ. Խաչերյան, նշվ. աշխ., էջ 31։

44 «Աշխարհացույց», Վարդան վարդապետի, հրատ. Հ. Պերպերյանի, Բարիզ, 1960, էջ 15։

ծանոթ մատուռն է, Գայլի ձորը՝ Թանահատին կից «սուրբ վարդապետաց վարժարանը»՝ Մուշի ուսումնականների Գլաձորում հաստատած համալսարանը։

Ֆրանսիացի արևելագետ Ժ. Սեն-Մարտենը, «Աշխարհացույց»-ի այս տեղեկությունը հիմք ընդունելով, հնարավոր է համարում, որ Վարդան Արևելցին, իր կյանքի վերջին տարիներին բնակություն հաստատած լինի Գլաձորում[45]։ Սեն-Մարտենի այս կարծիքն ընդունելի չէ, որովհետև 1280 թ., երբ հիմնավորվում էր Գլաձորի համալսարանը, Վարդան Արևելցին, որին նա շփոթում է Վարդան Բարձրբերդցու հետ, ինը տարի առաջ արդեն մահացել էր։ Մենք սկզբում այն կարծիքն ունեինք, որ Վարդանի «Աշխարհացույց»-ում Գլաձորի համալսարանին վերաբերող հատվածն ընդմիջարկություն է ուշ դարերի, սակայն ուսումնասիրելով այդ բնագրի բոլոր ընդօրինակությունները, համոզվեցինք, որ այդ հատվածը ընդմիջարկություն համարել չի կարելի, ուստի եկանք այն համոզման, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը պիտի լինի Վարդան Բարձրբերդցին, որը Գլաձորի համալսարանի սաներից է։

Գլաձորի հիմնադրության ժամանակը պարզելու համար կարևոր է Մխիթար Սասնեցու հաղորդած մի տեղեկությունը։ Նա եղել է Գլաձորի դպրոցի առաջին ուսանողներից և իր «Պատմութիւն հաւաստի և համառօտ» վերնագրով աշխատության մեջ Գլաձոր գալու և սովորելու մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում։ Ինքը փոքր հասակում զրկվելով հորից, որդեգրվում է Անդրեաս անունով իր աղգականի կողմից, որի մոտ և սովորում է։ Ստացած կրթությունը բավարար չհամարելով, կամենում է այն կատարելագործել։ Իր ուսումնակից երկու ընկերները՝ Ստեփանոսը և Հովհաննեսը, խորհուրդ են տալիս նրան սովորելու գնալ Գլաձոր, Ներսես Մշեցու հիմնած դպրոցում։ «Եւ քաջալերեալ ուսումնակցած իւրոց,— գրում է Սասնեցին,— որոց անուանքն Ստեփաննոս և Յովհաննէս կոչեցեալ... գնացեալ ի գաւառն կոչեցեալ Վայոցձոր, ի վանսն, որ այժմ կոչի Գլաձոր առ գերակատար և սուրբ վարդապետն Ներսէս և կացեալ անդ ընդ նմա ամս երեք»[46]։

Տվյալ դեպքում մեզ համար կարևոր է այն տեղեկությունը, որ Մխիթար Սասնեցին սովորել է նրա մոտ երեք տարի՝ «ամս երեք»։ Ներսես Մշեցին, ինչպես հայտնի է, մահացել է 1284 թ. փետրվարի 6-ին՝ «Հանգեաւ ի Քրիստոս Ներսէս վարդապետն ի վանս Գլաձորոյ թվ. հայոց ՉԼԳ (1284) ի փետրվարի Զ(6)»։ Եթե Մխիթար Սասնեցին Ներսես Մշեցու մոտ սովորել է երեք տարի, այդ դեպքում, պարզ է, 1280 թ. առաջ ու հետո նրա մոտ լինել չէր կարող, հետևապես այդ հաշվով ևս Գլաձորի գործունեությունը սկսելու տարին պիտի ընդունել 1280 թ.։

Գլաձորի դպրոցի գործունեությունը 1280 թ. սկսելու վերաբերյալ կա մի այլ տեղեկություն ևս։ Հայտնի է, որ Ներսես Մշեցին 1279 թ. գտնվել է Տարոնի Առաքելոց վանքում։ Մեզ հասել է մի ձեռագիր, որը գրված է Առաքելոցում այդ թվականին։ Այդ ձեռագիրը, սակայն, գրված պիտի լինի 1279 թ. սկզբներին, որովհետև հայտնի է, որ նույն տարում քրդերը հարձակվել են վանքի վրա, և Ներսեսն իր մի աշակերտի հետ հարկադրված է եղել փախչել և թափառել Քաջբերունիքում։ Այդ մեզ հայտնի է Ներսես Մշեցու վարքա-

---

[45] J. Saint-Martin, Mémoires historiques et géographiques sur l'Armenie, Paris, 1819, p. 466.

[46] Գ. Հովսեփյան, Մխիթար Սասնեցի, էջ 28—29։

գրությունից։ Այնտեղ ասվում է. «Իսկ մեծ վարդապետն հայոց Ներսէս, ի հալածմանէ անաւրէն և ժանդաբարոյ ազգին մարաց, եկեալ ի սուրբ ուխտէն Գաղարու աշակերտաւն իրով Եսայաւ ...Եւ եկն ի գաւառն Քաջբերունեաց. ամ մի բովանդակ աստ և անդ շրջագայեալ և վարդապետական քարոզութեամբ զամենեսեան լուսաւորեալ՝ զկարգաւորս և զաշխարհականս։ Եւ տեսեալ զերկիրն Քաջբերունեաց տգիտութեամբ վարանեալ առանց վարդապե-



Արիստոտելի «Սահմանք իմաստասիրութեան» առաջին էջը (Գլաձոր)։

տական ուսման... Եւ ինքն գնաց յերկիրն Սիւնեաց ի սուրբ ուխտն Գլաձորոյ»[47]։ Եվ այսպես, ամենաուշը 1279 թ. կեսերից Ներսես Մշեցին Եսայի Նչեցու՝ իր աշակերտի հետ հեռացած պիտի լինի Տարոնից և Գլաձորում հաստատված 1280 թ. սկզբներին։

Գլաձորի համալսարանի հիմնադրությունը, մեր կարծիքով, կապված է Թանահատի նորակառույց տաճարի հետ։ Հայտնի է, որ նրա կառուցումն սկսվել է 1273 թ.։ Այդ նշված է տաճարի գմբեթի թմբուկի հարավային պա-

47 «Յայսմաւուրք», 1730, էջ 358։

տուհանի գլխին, դրսից, չորս անջատ տառանիշներով. Թ. Ջ. Ի. Բ., որը վերծանվում է. «Թ[ուին] ՉԻԲ։ Այդ հայկական մեծ կոչվող թվահաշվով է և ներ-կա տարեթվով կլինի 1273։ Տաճարի կառուցումը, ըստ Օրբելյանի տեղեկության, ավարտվել է 1279-ին՝ «...յ728 թուականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ գեղեցիկ յօրինուածովք»[48]։ Հետևապես տաճարի կառուցումը սկսվել է 1273-ին և ավարտվել 1279-ին։

Նորակառույց շքեղ վանքի մեկենասները, առանձնապես Պռոշյան իշխանական տունը անշուշտ շահագրգռված պիտի լինեին վանքում ունենալ ձեռնարհաս և հեղինակավոր միաբաններ, իսկ տվյալ ժամանակում ամենից հանրաճանաչը և հեղինակավորը Մուշի Առաքելոց վանքի ուսումնականներն էին, որոնք և գալիս հաստատվում են Գլաձորում։ Գ. Հովսեփյանը հավանական է համարել, որ Մուշի ուսումնականներին Գլաձոր հրավիրած լինի Պռոշ իշխանը. «Մեզ համար մութ են դպրոցի ծագման հանգամանքները,— գրել է նա։— Պռոշ մեծ իշխանը՝ «աշխարհաշէն» կոչված Մխիթար Այրիվանեցու կողմից, հետամուտ և հովանավոր եկեղեցու և յուր իշխանության վանքերի ծաղկման, անհավանական չէ, որ Ներսես Մշեցին Գլաձորում հաստատվեր նորա ցանկությամբ և առաջարկությամբ»[49]։

Այսպիսով, Գլաձորի տեղադրության և հիմնադրության թվականի հետ կապված սկզբնաղբյուրների քննությունը մեզ բերում է այն հետևության, որ Գլաձորի համալսարանը հիմնվել է 1280 թ.։

* * *

Համալսարանի հիմնադրությունն ընդունելով 1280 թ., չպետք է սակայն կարծել, թե հիմնադրության հենց առաջին տարին դպրոցը մեկեն բարձրացել է միջնադարյան համալսարանի մակարդակի. հարկավոր էր որոշ ժամանակ, որ շրջապատում տարածվեր նրա հռչակը, հայտնի դառնար՝ թե Գլաձորում աշքի ընկնող ուսուցիչներ են դասախոսում, բարձր կրթություն են տալիս այնտեղ, որ Հայաստանի տարբեր վայրերից ուսանողներ հավաքվեին, որ կարողանար Գլաձորը բարձրանալ իրոք պատշաճող համալսարանական մակարդակի։ Հետևապես, ընդունելով համալսարանի հիմնադրությունը 1280 թ., չի կարելի նրա աշխատանքային մեկ-երկու տարիները համարել համալսարանական տարիներ. այդ հաստատող վկայություններ դեռ չունենք։

Գլաձորը, որպես աթենական տիպի բարձրագույն դպրոց, առաջին անգամ հիշվում է միայն 1283—1284 թթ. Գլաձորի սան Մատթեոս Մլճեցու կողմից։ Սա Գլաձոր է եկել սովորելու Կիլիկիայից, ձեռագիր է գրել այնտեղ և իր թողած չափածո հիշատակարանում Գլաձորը համարում է «Աթէնք պանծալի»։ Անհրաժեշտ ենք համարում բերել Մատթեոս Մլճեցու չափածո հիշատակարանի այդ հատվածը։ (Հիշատակարանը վերնագրված է «Գրոցս յիշատակարան և տաղ չափաբերական»).

---

48 Ստեփանոս Օրբելյան, էջ 143։

49 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք..., մասն Բ, էջ 196։

Ի Հայկազեանըս տումարի,
Յիւթնհարիւր մերոյս թուի,
Երեսներորդի և երորդի,
Որ եւ ամաւք շրջագայի։
Զմեր հայկազեան տուն հայրենի,
Որ բռնացեալ ըզսա ումի,
Ի բարբարոս եւ այլազգի,
Որոյ անուն Ահմատ կոչի։
Յարքայութեանըն Լեւոնի,
Որդւոյ Հեթմոյ բարեպաշտի,
Բարերարոյ եւ հեզահոգի,
Որ եւ տիրէ Կիլիկէի...
Մատթէ անուն եւ եղկելի
Սուտ քահանայ, տարտամ հոգի,
Ժահահոտեալ մեղաւք ի լի,
Զոր կամաւորըն գործեցի։
Ի նահանգէ Կալիկեցի
Ուստի եւ փողն Տարսոնացի.
Յանապատէ Հռչակելի
Որ յորջորջի Մլիճի։
Է ի ստորոտն Տաւրոսի,
Լերին մեծի եւ անուանի,
Մերձ ի գղեակ Պապառանի։
Որոյ եկեալ յայս գաւառի,
Որում անուն Վայ ձոր կոչի
Հուպ ի շիրիմն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի,
Յերկրորդ Արքէնըս պանծալի,
Առ ոտըս հաւր մեր Ներսէսի[50]։

Դավիթ Անհաղթի «Սահմանքի» առաջին էջը (Գլաձոր)։

50 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց, էջ 1039։

Անտիկ աշխարհում աթենական էին անվանում բարձրագույն ուսումնական հաստատությունները. նույն ավանդույթը, ինչպես երևում է, կիրառել են նաև միջնադարյան Հայաստանում։ Գլաձորը համալսարան որակումով հիշում է Ստեփանոս Օրբելյանը. համալսարանի ուսուցչապետ Եսայի Նչեցուն ուղարկած գրության մեջ նրան անվանում է «Յիսուսական համալսարանի պետ»[51]։ Արտակարգ գոհունակով է խոսել նաև համալսարանի մասին. անվանելով «Արեգակնափայլ և երկնահանդէս, գերահռչակ, հոյակապ և մեծաշուք վեհագոյն ուխտիդ Հայաստանեացս աշխարհի, տեղի լոյսոյ և ակնկալութեան և պարծ[անք] աստուածային հանճարոյն համեղութեան ճաշակացն ընտրութեան, անաթ վեհագույն և երկնակենցաղ վարուց և ուսմանմակացութեան ներընդունակ»[52]։

МЕСТОНАХОЖДЕНИЕ И ДАТА ОСНОВАНИЯ ГЛАДЗОРСКОГО УНИВЕРСИТЕТА

(к 700-летию основания университета)

Доктор историч. наук А. Г. АБРАМЯН

(Резюме)

Гладзорский университет, одна из знаменитых высших учебных школ средневековой Армении, находился в историческом Вайоц-дзоре (в нынешнем Ехегнадзорском р-не) и действовал с 80-х годов XIII века до 40-х годов XIV века. Его ректорами были крупные ученые своего времени Нерсес Мшеци и Есаи Нчеци. В университете учились студенты со всех концов Армении: из Киликии, Тарона, Айрарата, Сюника. Здание университета не сохранилось, это и сделало неясным его местонахождение; некоторые ученые помещали его в ущелье села Вернашен, другие—в местность Танаат. На основании письменных источников и археологических раскопок, произведенных ЕрГУ, мы полагаем, что Гладзорский университет находился при монастыре Танаат и действовал под его покровительством. Большинство исследователей принимают за дату основания университета 1280 год, так как в этом году там была переписана рукопись, содержащая «Опровержение ересей» армянского ученого V века Езника Кохбаци. Мы разделяем это мнение, однако считаем, что первые годы университетской работы были еще организационным периодом. Гладзор достигает настоящего университетского уровня только с осени 1283 года; с этого времени в памятных записях рукописей Гладзор упоминается как «прославленные Афины».

---

51 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 132, ծանոթ. № 3։

52 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 848, էջ 78բ—79ա։